ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan.tavush@mta.gov.am, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
26 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 68--Ն

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 182-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն,2003թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն և 2020թվականի մայիսի 27-ի թիվ 867-Ն որոշումները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 182-Ն որոշմամբ հաստատված համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Դիլիջան համայնքի 2020 թվականի բյուջեի վարչական մասի եկամտային բաժնում կատարել հետևյալ փոփոխությունները՝
ա)«Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին» հոդվածով եկամուտներն ավելացնել 386100(Երեք հարյուր ութսունվեց հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ
բ)«46-07-00» Համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար տեղական վճար եկամուտները՝պակասեցնել -17715000(Տասնյոթ միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ
գ) 45-06-00 Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի,իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար տեղական տուրք-2000000(Երկու միլիոն)ՀՀ դրամ
դ) 46-19-00 «Այլ տեղական վճարներ»-3000000 (Երեք միլիոն)ՀՀ դրամ

2. Դիլիջան համայնքի 2020 թվականի բյուջեով նախատեսված 09-01-01 «Նախադպրոցական կրթություն» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվից պակասեցնել հոդված 4511 23348000(քսաներեք միլիոն երեք հարյուր քառասունութ հազար)ՀՀ դրամ՝ որից

ա)Թիվ 1 մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն-2400000
բ)Թիվ 2 մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն-5700000
գ)Թիվ 3 մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն-9865000
դ)Թիվ 4 մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն-900000
ե)Թիվ 5 մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն-200000
զ)Թիվ 6 մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն-1180000
է) Հաղարծինի մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն- 2053000
Ը) Թեղուտի մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն- 1050000

3. «01-01-01 Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում » գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի հոդված 4267 ավելացնել 1019100(Մեկ միլիոն տասնինն հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ և հոդված 4269 ավելացնել 1500000(Մեկ միլիոն հինգ հարյուր հազար)ՀՀ դրամ , «04-05-01 Ճանապարհային տրանսպորտ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի հոդված 4511 ավելացնել 1200000(Մեկ միլիոն Երկու հարյուր հազար)ՀՀ դրամ, «04-07-01 Զբոսաշրջություն» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի հոդված 4819 ավելացնել 700000(Յոթ հարյուր հազար)ՀՀ դրամ, «08-03-01 Հեռուստառադիոհաղորդումներ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի հոդված 4639 ավելացնել 1000000(Մեկ միլիոն)ՀՀ դրամ և «09-06-01 Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի հոդված 4269 ավելացնել 600000(Վեց հարյուր հազար)ՀՀ դրամ:

4. «05-06-01 Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի հոդված 4213 պակասեցնել 5000000(Հինգ միլիոն) ՀՀ դրամ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ**